

Կարծիք

Միքայել Արմենի Նավասարդյանի «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված C.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսը գտնում է, որ ժամանակակից տնտեսական իրականությունը հետազոտելիս տնտեսագետները դուրս են բերում և առերեսվում են տնտեսական աճի և հասարակության բարօրության միջև կապի խզումը փաստող տարբեր էմպիրիկ ապացույցների հետ: Իսկ ընդհանրապես, երկրի տնտեսության համայնքում առաջնային տեսանկյունից միայն քանակական գնահատականները բավարար չեն: Դեռք են նաև որակական շեշտադրումներ: Այս տեսանկյունից տնտեսական աճի որակի նկարագրի մեջ հատկապես կարևոր են տնտեսական արդյունավետության դրսնորումները, քանզի ժամանակակից աշխարհում տնտեսական աճին ամենամեծ նպաստ ունեցող գործոնն արդյունավետությունն է: ՀՀ-ում տնտեսական արդյունավետության գնահատման տարաբնույթ մեթոդների կիրառումը և տնտեսական աճի հետազոտության քանակականից դեպի որակական չափումների անցումը կարող է օգնել ՀՀ տնտեսական աճն առավել արդյունավետ և որակյալ դարձնել: Դրանով հանդերձ, ըստ ատենախոսի, հիմքեր կստեղծվեն նոր որակի հետազոտությունների համար (էջ 3-4):

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Հետազոտության նպատակը ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության և տնտեսական աճի որակի վերլուծությունն ու գնահատումն է: Դրա հետ կապված ատենախոսը լուծել էն հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել է արտադրողականության և տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձը, դուրս է բերել առավել տարածված մոտեցումները և մեթոդները, դրանց միջոցով գնահատել է ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը, դրա դինամիկան և կառուցվածքը,

- բացահայտել է ՀՆԱ արտադրության արդյունավետության դերը տնտեսական աճի որակի ձևավորման և դրսնորման գործընթացներում,
- բացահայտել է ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները՝ ըստ ոլորտների և վարչատարածքային միավորների, և դուրս բերել դրանցում նկատվող որակական դրսնորումները,
- գնահատել և վերլուծել է ՀՀ տնտեսության որակն ու դրա դինամիկան,
- բացահայտել է ՀՀ տնտեսական աճի և դրա որակի միջև խզումը,
- մոդելավորել է տնտեսության որակը, ստացված մոդելը կիրառել է ՀՀ նյութերով և դրա միջոցով աջակցել տնտեսության որակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակմանը:

Գիտական նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքներն, ըստ հեղինակի, հետևյալն են՝

- Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմբվիսթի համաթվի և ստոխաստիկ սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:
- Մալմբվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
- Որոշվել են ՀՀ տնտեսության ճյուղային, ներձյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել է դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխություններին:
- Մշակվել է տնտեսության որակի սիմուլացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ։ Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունան մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տնտեսամեթոդաբանական հարցերա ու գնահատման միջազգային փորձը» գլխում հեղինակը դիտարկում է տնտեսական արդյունավետության գնահատման տեսամեթոդաբանական հարցերը (էջ 8-21) և տնտեսական աճի որակի գնահատման միջազգային փորձը (էջ 28-30): Առանձին քննարկում է ՀՆԱ արտադրության արդյունավետության և տնտեսական աճի որակի փոխառնչությունները: Արդարացիորեն նշում է, որ տնտեսական աճի որակի բացակայության պայմաններում սոցիալական բնեղացումն ուժեղանում է: Մասնավորապես, ՀՀ պարագայում տնտեսական աճի հիմնական մասնաբաժինը ձևավորվում է ընդհանուր գործոնային արտադրողականության հաշվին (էջ 39-42):

Ատենախոսության երկրորդ՝ «Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը» գլխում հեղինակը քննում է ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության պարամետրային և ոչ պարամետրային գնահատման հիմնախնդիրը, վերլուծում տեխնոլոգիական արդյունավետության փոփոխության և բուն արտադրության արդյունավետության փոփոխության (էջ 48) ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա 2000-2021թթ., համեմատում դա այլ 47 երկրների հետ (էջ 51-53): Վերլուծության արդյունքում ատենախոսը փաստում է, որ միջին եկամուտ ունեցող երկրների մեջ ՀՀ ՀՆԱ թողարկման արդյունավետությունը (ՍՍՍ) 39-րդն է (էջ 61): Երկրների մեջ ՀՀ ՀՆԱ թողարկման արդյունավետությունը (ՍՍՍ) 39-րդն է (էջ 61): Այնուհետև ատենախոսը քննարկում է տնտեսության կառուցվածքի ազդեցությունը ՀՆԱ արտադրության վրա: Մասնավորապես, կանգ է առնում տնտեսության կենտրոնացվածության մակարդակի դինամիկայի վրա (էջ 65-74), իրավացիորեն նշում տնտեսության գերկենտրոնացվածությունը Երևանում (էջ 73) և այդ խնդիրը կապում է ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունների հետ:

Հ. Բ.

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը» զյուում հեղինակն առաջարկում է ՏԱՌՀ ցուցանիշը՝ վերլուծելով 78 երկրների համապատասխան ինդեքսները 18 տարիների ընթացքում (էջ 99-102): Ատենախոսը յուրովի է բացահայտում ՏԱՌՀ ցուցանիշի գծով ՀՀ հետնապահ լինելու պատճառները: Մասնավորապես, նա նշում է ՀՀ-ում կրթության վրա կատարվող ցածր ծախսերի և մշակող արդյունաբերության տեխնոլոգիական հետամսացության պարագաները (էջ 106): Տարբեր երկրների միջև ՏԱՌՀ բազմաբնույթ համեմատական դիտարկումները փաստում են. ՀՆԱ բարձր քանակական աճի պայմաններում աճի որակով պայմանավորված կարող է լինել կենսամակարդակի անկում: Հայաստանի պարագայում տնտեսության որակի աճը հետ է մնում իրական ՀՆԱ աճից՝ 2.4 տոկոսային կետով: Վերջում ատենախոսը շարադրում է տնտեսական աճի որակի սիմուլացիոն մոդել (էջ 126-129). հնարավորություն տալով պրակտիկայում ունենալ "առանցքային գործիք": Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը: Նա, մասնավորապես, առաջարկում է սիմուլացիոն մոդել, որով 3 տարվա գործիքը:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Աշխատանքը ՀՆԱ աճի որակի ու արդյունավետության մասին է: Դրա հետ կապված արվում են բազմաթիվ հետաքրքիր վերլուծություններ: Այդուհանդեռ, աշխատանքում չկա վերլուծություն կապված այն բանի հետ, թե միավոր տնտեսական աճի վրա ինչ ֆինանսական, մարդկային և հանքա-հումքային ռեսուրսներ են ծախսվել վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների: Այս առումով 2-րդ զյուի 3-րդ պարագափի վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների: Այս առումով 2-րդ զյուի 3-րդ պարագափի վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների: Այս առումով 2-րդ զյուի 3-րդ պարագափի վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների: Այս առումով 2-րդ զյուի 3-րդ պարագափի վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների: Այս առումով 2-րդ զյուի 3-րդ պարագափի վերջին 2 տասնամյակներում՝ ըստ տարիների:

2. Ատենախոսը քննարկում է տնտեսության կառուցվածքի ազդեցությունը ՀՆԱ արտադրության վրա: Մասնավորապես, կանգ է առնում տնտեսության կենտրոնացվածության մակարդակի դինամիկայի վրա (էջ 65-74), իրավացիորեն նշում տնտեսության զերկենտրոնացվածությունը Երևանում (էջ 73), բայց այդ խնդիրը կապում

Է ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունների հետ:
Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսության գերկենտրոնացվածությունը
Երևանում հիմնականում պայմանավորված է ՏԻՄ մարմիններին բյուջետային ինքնարակ
աղբյուրների բացակայությամբ (ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը և ՏԻՄ
օրենսդրությանը) և պետական կառավարման ապարատի մայրաքաղաքային
տեղաբաշխմամբ:

3. Էջ 33-ում հեղինակը քննարկում է Խաթերլինի երջանկության պարագորամ՝
Զինաստանի պարագայում: Հեղինակը նշում է, որ իբր թե չնայած 1 շնչին ընկնող ՀՆԱ
ցուցանիշն այդ երկրում վերջին 2 տասնամյակներին քառապատկվել է, կյանքից
բավարարվածությունը չի բարելավվել: Այս պարագայում և պ-ն Խաթերլինը, և
ատենախոսը տրվել են արևմտյան պրոպագանիստական կրքերին: Նման քան չկա:

4. Ինչպես ներածության մեջ (Էջ 5), այնպես էլ բուն աշխատանքում (զլ. 2) 2-րդ և 4-րդ
նորույթները պատշաճ մակարդակով հիմնավորված չեն:

5. Հարկ է նշել, որ աշխատանքում շատ են հապավումները: Ճիշտ կիմներ հենց
սկզբից, ներածությունից առաջ, դրանք թվարկել:

6. Էջ 29-ում ասվում է, որ Կանաչ աճի գլոբալ ինստիտուտը հաշվարկել է կանաչ աճի
համարվեր ավելի քան 240 երկրի համար (??):

7. Էջ 47 11-րդ տող վերևից՝ "երկրաշափական" ի՞նչ:

Եզրակացություն

Ատենախոսությունն իրենից լուրջ հետազոտական աշխատանք է ներկայացնում,
ինչի մասին վկայում են ուսումնասիրության վերջում ներկայացված արդյունքները:
Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները ընդունելի են:
Հետազոտության արդյունքում առաջարկված առաջարկությունների կիրառումը կարող է
եական ազդեցություն ունենալ ՀՀ ԱՎԾ այսօրվա թերի գործունեության վրա:

Այս աշխատանքի ինքնուրույնությունը, ամբողջականությունն ու արժեքը,
հետազոտությունում օգտագործված հարուստ տեսական և գործնական նյութերը թույլ են
տալիս եզրակացնել, որ ատենախոսությունը արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի

բովանդակությանը: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են 6 բագականությանը:

Միքայել Արմենի Նավասարդյանի՝ «ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումը տնտեսական աճի որակի բարելավման համատեքստում (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – ««Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հ. Ա. Բագրատյան

Հ. Ա. Բագրատյանի ստորագրության իսկությունը
հաստատում եմ՝

21 հուլիսի 2024 թ.



Դաստիարակության 12.21